## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք.Երևան, Վազգեն Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱԾՁԲ-01/16 ծածկագրով պարզեցված ընթացակարգի արդյունքում 2016թ-ի մայիսի 11-ին կնքված ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱԾՁԲ-01/16-01 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2016թ-ի հուլիսի 6-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

**Փոփոխության պատճառ:** Կողմերի մոտ անհրաժեշտություն է առաջացել երկարաձգել Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը:

**Փոփոխության նկարագրություն:** Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգում 30 օրացուցային օրով:

**Փոփոխության հիմնավորում:** Պայմանագրի 8.4 և 8.5 կետեր, «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության թիվ 168-Ն որոշման 60-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի գնումների համակարգման բաժին:

Հեռախոս՝ 511-788, 511-787:

Էլ. փոստ՝ ddgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
11.05.2016թ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՇՁԲ-01/16-01 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «06 » հուլիսի 2016թ.

<<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ն՝ ի դեմս ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Ռ. Ասիկյանի (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՄարտՇին>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Մ.Հարությունյանի (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 11.05.2016թ. կնքված N ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՇՁԲ-01/16-01 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.4 և 8.5 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Աշխատանքի կատարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով:

1.2 Պայմանագրի 1.3 կետում <<60-րդ օրացուցային օրը>> բառերը փոխարինել <<90-րդ օրացուցային օրը>> բառերով:

1.3 Պայմանագրի N2 հավելված հանդիսացող օրացուցային գրաֆիկը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011005833
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավարի ժ/պ Ռ. Ասիկյան

(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
***«ՄարտՇին» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Նորք 2-րդ նրբ. 17
ՀՎՀՀ՝ 01534233
Հ/Հ՝ 16043022733200
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, Մաշտոց մ/ճ

Տնօրեն Մ. Հարությունյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 1
11.05.2016թ. կնքված N ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՇՁԲ-01/16-01 պայմանագրի
06.07.2016թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

**<<Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի վարչական շենքի վերանորոգման>> աշխատանքների կատարման**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Քանդման ծավալներ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 90-րդ օրացուցային օրը |
| 2 | Համաշինարարական ծավալներ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 90-րդ օրացուցային օրը |
| 3 | Էլեկտրոտեխնիկական մաս | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 90-րդ օրացուցային օրը |
| 4 | Ջեռուցում | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 90-րդ օրացուցային օրը |
| 5 | Ներքին ջրամատակարարում | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 90-րդ օրացուցային օրը |
| 6 | Ներքին կոյուղի | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 90-րդ օրացուցային օրը |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 90-րդ օրացուցային օրը |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011005833
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավարի ժ/պ՝ Ռ. Ասիկյան

(ստորագրություն)

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

***«ՄարտՇին» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Նորք 2-րդ նրբ. 17
ՀՎՀՀ՝ 01534233
Հ/Հ՝ 16043022733200
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, Մաշտոց մ/ճ

Տնօրեն՝ Մ.Հարությունյան

(ստորագրություն)